

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

VOL. I. NO. 15.

FRESNO, CAL. SATURDAY, NOV. 22, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 15.

ՖՐԷՆՕ, ՔԱԼ. ՇԱԲԱԹ, ՆՈՅ. 22, 1902

ԳԻՆ 5 ՍԵՆԹ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամեն անոնք որ Քաղաքացի կըստանան և երեք շաբաթ շարունակ կը պահեն զայն՝ մեր կողմէն կանոնաւոր բաժանորդ կը նկատուին: Իսկ անոնք որ չեն փափաքիր բաժանորդագրուիլ Շաբաթաթերթիս՝ կը խնդրենք որ հաճին զայն մեզ վերադարձնել անմիջապէս, որպէս զի իրենց անունները ջնջենք մեր ցանկէն:

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Երկրաշնտի կեդրոնը՝ կրակի և լաւայի աշխարհի մէջ տարօրինակ իրարանցում մը եղած ըլլալու է այս տարի: Սանթա Մարիայի գոտում գոչումները դեռ չի կեցած՝ ուրիշ հրաբուխներ ալ բորբոքիլ սկսած են: Ըսթրոմպուլի՝ Սիկիլիոյ հրաբուխը գործօն վիճակի մէջ է հիմայ: Սամօան կղզիի հրաբուխը կրակ ու լաւայ դուրս կուտայ: Հօնօլուուէն լուր կուգայ թէ Քեւօիա հրաբուխն ալ սուկալի կերպով բռնկած է վերջերս: "Աստուած վերջը բարին ընէ":

—Ամերիկայի Գործաւորական Միութիւններու Գաշնակցութիւնը՝ որոյ նախագահն է Սամուէլ Քամփերը, իւր գոյութեան Չարչ տարեկարծը ասօնց վերջերս: Այս առթիւ Նիւ Օրլինսի մէջ պատգամաւորական ընդհանուր ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ շաբթուս մէջ ընտրութիւններ ընելու և ուրիշ գործաւորական հարցեր քննելու համար: Ժողովը տեւեց վեց օր, և շատ հետաքրքրական և շահեկան եղաւ՝ գործաւորական ընկերութեանց համար:

—Աժուխի գործաւորաց գործադուլը՝ կը յիշեն անշուշտ ընթերցողք, լուծուեցաւ անցեալներն՝ պայմանաւ որ ամէն ինչիր թողուէր Նախագահին կողմէ կարգուած յանձնարարի մը: Այս յանձնարարումը, որ կը բաղկանայ եօթը անդամներէ, գումարեցաւ յարգանքներն անցեալ շաբթուն վերջերը, և գործի սկսեց: Առաջին վկան եղաւ Ճօն Միչլը՝ Հանքագործներու Ընկերութեան ծանօթ նախագահը, որ իբր չորս օր սուր հարցաքննութեան ենթարկուեցաւ՝ ամուխի ընկերութեանց կողմէ վարձուած քանի մը հոշակաւոր փաստարաններու կողմէ: Միչլը մեծ յաջողութեամբ զիմացաւ հարցումներուն ու լաւ տպւորութիւն թողուց Գանձնախմբին վրայ:

—Ամերիկեան փողերանոցի պաշտօնէութեան տեղեկագրէն կը հասկցուի թէ 1901 թուականին Միաց-

ԳՐԹՆԸՐ ԿՕԼՏԵՍԹԻՆ ՔԸՄՓԸՆԻ

Ֆրէզնոյի ՄԵԾ Խանութը

KUTNER GOLDSTEIN & CO.
THE HOUSE THAT SAVES YOU MONEY

Ֆրէզնոյի լաւագոյն Խանութը

**** ԾՆՈՒՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐ ****

Հօրը, Մօրը, Քրոջը, Եղբօրը — և ամեն մարդու համար: Մեծ քանակութեամբ ապրանք՝ անկէ ընտրելու համար. ամենափոքր գիներ: Բարի գալուստ նայելու եկողներուն:

կալ Նահանգներէն 78 ու կէս միլիոն տոլարի ոսկի և 33 ու կէս միլիոն տոլարի չափ արծաթ արտադրուած է: Աշխարհիս բոլոր երկիրները միասին արտադրած են 263 ու կէս միլիոն տոլարի ոսկի և 105 միլիոնի չափ արծաթ:

—Հայ Երեցական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցը որ Վանի մէջ հայ որբ մը կը պահէ, յառաջիկայ Շնորհակալութեան օրը (Թանքսկիվինկ տէյ)՝ իր սովորութեան համաձայն՝ նուէրներ պիտի հաւաքէ իր աշակերտներէն՝ նոյն որին ի նպաստ: Վաղը՝ մասնաւորապէս պատրաստուած պատիկ պահարաններ պիտի բաժնուի այս առթիւ՝ բոլոր աշակերտներուն: Պահարաններուն վրայ տպուած է հայերէն և անգլիերէն լեզուներով "Յիշեցէք Հայաստանի Որբերը":

—Կը լսենք թէ Իսթ Օրէնճի՝ որրոյ Հոգատար Ընկերութիւնը—որ իբր տարի մը առաջ կազմուած է քանի մը հայ օրիորդներու նախաձեռնութեամբ, և որոյ անդամներուն շատերը ամերիկացի օրիորդներ են—Նոյ. 20ին "Պագար" մը պիտի սայ՝ Տիկին Գաստիկեանի տան մէջ: Անդամուհիք որ և է ջանք ու ծախք չեն խընայած այս ձեռնարկը շահաբեր ընելու համար, որոյ արդիւնքը, աւելորդ ըսել թէ՛ պիտի յասկացուի մեր անտերունջ որբերուն:

Իսթ Օրէնճի այս Հոգատարը կը հաւտանք թէ միակ կազմակերպութիւնն է իր տեսակին մէջ այս պատճառաւ որ այս կազմակերպութիւնը կը բաղկանայ հայ ու ամերիկացի օրիորդներէ միայն: (Տիկին մը, կամ էրիկ մարդ մը չի կրնար մուտ գտնել այս Հոգատարներու մէջ):

Ֆրէզնոյի բազմաթիւ օրիորդներն ալ այսպիսի ուղոյն կազմակերպութիւն մը ունենալու չէին: Ոչ ա-

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

—Մանկութեան փոքր ու անմեղ ասացածները երիտասարդութեան գործունէութիւնը կրնան շատ անգամ սահմանել՝ խորատես մարդու մը աչքին առջև:

—Սերիկացիք՝ ձէնթըմէն՝ ը կր սահմանեն այսպէս.

1. Սյն որ գիտէ մանկան զգացումները յորդել:
 2. Կին մը գովել պէտք եղածին շափ:
 3. Խրատ տալէ զգոյշ ըլլալ՝ երբ իրմէ խրատ չի խնդրուիր:
 4. Երբ աիկնոջ մը այցելութեան կերթայ՝ երկար ատեն չի մնար հոն:
 5. Կրօնական վիճարանութիւն մը չի սիրիր խուռն բազմութեան մը մէջ:
 6. Չափէն աւելի գովեստներով մէկը չի վշտացներ:
 7. Ատանց աւելորդ բառերու գիտէ լաւ կրթութեան մը ապացոյցները տալ:
 8. Կնոջ մը սխալներուն վրայ ուշադրութիւն չի հրաւիրեր:
 9. Իր կինը չի ներկայացներ կրր կամք չունեցող անձնաւորութիւն մը:
 10. Իր գործաւորներուն հետ այնպէս մը կը վարուի որ տեսնողը կը խորհի թէ անոնց բախրաւորութեան մէջ մասնաւոր շահեկանութիւն մը ունի:
- Հայ ձէնթըմէն մը այս ամեն բարեմասնութիւնները ունենալէ զտա՝ պարտի գիտնալ թէ իրեն պէս չի մըտածող մարդն իրաւունք ունի յորդուիլ իրմէ:

—0—

Երկրագործին մէկը ջորի մը ունէր: Չայն ամառը ամբողջ գործածելէ վերջ՝ ձմեռը սրտատակողի մը զըրկեց որ երթայ հանդիստ ընէ: Գարնան սկիզբները՝ ջորիին պէտք ունեցած ըլլալով՝ կերթայ որ զայն տուն բերէ: Խեղճ մարդը ի զուր անզը կաշխատի ջորին բռնել: Երկար ատեն անոր ետեւն վազելէ և յոչնելէ վերջ՝ երկրագործը կսկսի հայհոյանքներ ընել իր ապերախտ ջորիին որ՝ Բազաղամի էշին պէս՝ լեզու ելած կըսէ՝ զայրացած երկրագործին.

—Ի զուր անզը կը հայհոյես, տէր իմ, ես քեզի հետ գալու միտք չունիմ. ուրիշ մը գտիր:

—Չորի, սիրելիս, եկ որ երթանք, քեզ պէտք ունիմ.

—Ամենեկին չեմ գար: Հոս իմ գործս շատ աղէկ է. մինչև երեկոյ կը պտախմ ու փորս ալ կելլէ. ինչո՞ւս պէտք օրը ասաք ժամ աշխատիլ քեզի՝ կտոր մը խտտի համար:

—Խենթ մի՛ ըլլար, եկուր երթանք: Ասկէ վերջ քեզ ութը ժամ միայն գործել կուտամ: Տեսչէն, քու հայրըդ օրը 12 ժամ կը գործէր, ու բնաւ չէր սրտնջար:

—Հը, իմ հայրս էշ էր:

Վարձու երկիր

Երեսուն սրտավար ստաջնակարգ այգի մը կայ վարձու: Մանրամասնութեանց համար զիմել խմբագրատունս:

ձ. Մ. Սերբեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերբեան

Սան Ռօքիև Վայի Լմևու Քօ,

ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիշ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թ/ւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:

Թէլեֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ տան տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Ֆ Ր Է Ջ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ

ԱՅ ԿՎԵՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՅՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլեֆօն — — — Մէյն 24

ՖՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ:

Ընտիր կերակուրի հասկար գևս

ՍԻԹԻ ՊԷՅԲԸՐԻՆ

— ձ. Մ. Քօհլըր և Փիքֆօրթ, Ճաշարանատարք —

1138 ԱՅ Ընթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ԱԶԳ

Նոյ. 27ի Հինգշաբթի երեկոյ ժամը 8ին Ֆ. Հ. Գ. Միութեան ընդհանուր անդամական ժողովը նիստ պիտի ունենայ Միութեան սեփական սրահին մէջ: Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ այս կարեւոր ժողովին: Ի դիմաց Ֆ. Հ. Գ. Մ. Ընդհ. Ժող. Մ. Ալէմեան, Ատենագպիր

ԳՐԻԳՈՐ Կ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ,

ԳՈՐԾԱԿԱԼ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ԿՐԱԿԻ ԱՊՍՏՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Կապահովագրէ մէկէ մինչև եօթանասուն տարեկան անձինք՝ ատանց սեռի խտրութեան:

ՊԱՇՏՕՆԱՏԵՂԻ | Ֆրէզնօ Լօն Էնտ Ալէլիակ Պէնք

Փօսթ Թֆիս Պաքս, 1285 | Պիլատիակ. Սենեակ, Թ/ւ 14 և 15

Թէլեֆօն, պրու 272

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033
Քաժանորդագիրը Կանխիկ վճարելի է միշտ
Նամակ, ծրար կամ դրամ կը շրկուին խմբագրու-
թեան հետեւալ հասցէիւ՝

To The Editor of
THE CITIZEN
P. O. Box 1224 Fresno, Cal

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the
State of California.
H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՂՆՕՒ ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ՆՈՅ. 22, 1902

"ՄԵՂԸ ՇԻՆԵԼ ՍՈՐՎԵՑԷՔ"

Մեր այսօրուան վերնագիրը թերեւս շատերուն
ծիծաղը շարժէ: Սակայն մեր նպատակը չէ ընթերցող-
դին մեղրագործութիւն սորվեցնել: Ով որ այս յետա-
գայ քանի մը տողերը ուշադրութեամբ կարդալ յանձն
առնէ՝ պիտի համոզուի թէ այս յօդուածս իրական
մեղրի հետ գործ չունի բնաւ:

* * *

Ֆրէզնոյի ճանճերը տեսնելով որ չափազանց կը հա-
լածուին տեղական ժողովրդէն անխնայ կերպով՝ որո-
շեցին օր մը ընդհանուր ժողով մը կանչել՝ այս կարե-
ւոր խնդիրը լաւ մը ծեծելու և այս անտանելի չարի-
քին դարման մը գտնելու նպատակաւ:

Ժողովը տիղի ունեցաւ շատ ընդարձակ սրահի մը
մէջ՝ ի ներկայութեան միլիոնաւոր հարստահարեալ
ճանճերու: Ատենապետի և ատենադպրի ընտրութիւնը
կատարելէ վերջ՝ համրաւաւոր ճանճ մը խօսք առաւ և
ժողովին նպատակը բացատրեց՝ խնամով պատրաս-
տուած ատենախօսութեամբ մը: Ատենախօսը նկարա-
գրեց այն անտանիլի վիճակը որուն ենթարկուած էին
իր ցեղակիցները՝ քաղաքին ամէն կողմերը՝ ամէն ան-
ձի կողմանէ. պատմեց թէ ինչպէս կը վնասուէին
բնակարաններէ: Նկարագրեց այն սոսկալի թակարթ-
ները որոնց մէջ հազարաւորներ իրենց ստեղծէն բըռ-
նուած՝ չարաչար մահուամբ մեռած էին՝ ամբարն
եղանակին մէջ մանաւանդ: Յոյց տուաւ ատենախօսը
անհերքելի փաստերով թէ անիրաւ Ֆրէզնոյցիները
թող չէին սար որ հանգիստ կերպով օր մը իրենց
կերակուրը ուտէին: Ատենախօսը բողոքեց սա անիրաւ-
ութեանց դէմ. վրէժխնդիր ըլլալ քարոզեց, և կոչում
ըրաւ իր անթիւ ցեղակիցներուն՝ կարգադրութիւն
մը ընել՝ իրաց այս անտանելի վիճակը անմիջական
փոփոխութեան մը ենթարկելու համար:

Նոյն նիւթին վրայ քանի մը իրազեկ ատենախօս-
ներ ալ խօսեցան, ու ձայնակցեցան առաջին ատենա-

քանին՝ անմիջական դարմանի մը անհրաժեշտ պէտքը
մատնանիչ ընելով:

Այս կարգը գործնականին էր: Շատ մը առաջար-
կութիւններէ և վիճարանութիւններէ վերջ՝ երկու չար-
եաց փողոցայինը ընդունուեցաւ, այսինքն՝ փոխանակ
Ֆրէզնոյցիներուն հետ գժուարութիւն ունենալու՝ գաղ-
թել այս սպիրտիստ քաղաքէն ու երթալ խմբովին՝
Լօս Անճէլէսի հիւրասէր ժողովրդին մէջ հաստատ-
ուիլ: Քանի մը օր վերջը՝ տրուած որոշման համա-
ձայն՝ Ֆրէզնոյի բոլոր ճանճերը ճամբայ ելան դէպի
Լօս Անճէլէս:

Երկու օր ճամբորդելէ վերջ՝ առաւօտ մը մեծ կա-
րաւանի մը հանդիպեցան ասանք որ Լօս Անճէլէսի կող-
մէն կուգար ու կը ճամբորդէր դէպի Ֆրէզնո: Երկու
կողմէն սովորական բարեկեցիկ վերջ՝ ճամբորդները բա-
րեկամացան իրարու հետ, և սկսեցին տեղեկութիւններ
հարցնել այլ և այլ տեղերու և քաղաքներու բնակչաց
նկատմամբ:

Ըստ բաւականին մտերմանալէ յետոյ՝ Ֆրէզնոյիք
հարցման մը պատասխանելով իրենց ճամբորդութեան
պատճառն ու նպատակը բացատրեցին մանրամաս-
նաբար:

—Ի՞նչք ի՞նչ գործով կը զբաղէիք Ֆրէզնոյի մէջ, հար-
ցուց մէկը Ֆրէզնոյէն փախչող գաղթականներէն մե-
կուն:

—Մասնաւոր գործ չէինք ըներ: Մեր գործն էր ու-
տել, խմել, բզբալ ու շրջիլ:

—Հապա ուրեմն ինչպէ՞ս ձեր ապրուստը կը շինէիք՝
առանց գործ մը ընելու:

—Աղբուստ շիկու պէտք չի կայ: Ամեն տեղ ուտելիք
կը գտնուի արդէն. երբ անօթութիւն գգայինք՝ կեր-
թայինք ուտել՝ մեր ուղածին չափ:

—Ի՞նչք ո՞ր և է արհեստ կամ գործ չէ՞իք գիտեր:

—Ի՞նչ, մենք արհեստ չունինք, և ունենալու հարկը
չենք տեսներ բնաւ:

—Ահա այս իսկ է եղեր պատճառը ձեր բոլոր դժ-
ուարութեանց: Վստահ եղիք, բարեկամներ, թէ ուր
որ այ երթաք՝ մարդիկ ձեզ հանգիստ չի պիտի տան:
Լօս Անճէլէսի հիւրասէր ժողովրդէն տարբեր ընթացք
մը մի՛ ակնկալէք: Այս աշխարհի վրայ գործի մը չի
ծառայող կենդանիները՝ յարգ, պատիւ ու արժէք չեն
կրնար ունենալ:

—Ի՞նչք ուրեմն ի՞նչ գործով կը զբաղիք:

—Մենք մեզր շինել գիտանք: Երկու օրէն երբ մեր
կարավանը Ֆրէզնոյի մօտենայ՝ այդ տեղի երկրագործ-
ներէն շատեր մեզ գիմաւորելու պիտի գան՝ իրենց ըն-
տանիքներով ու զաւակներով միասին. առօք փառօք
մեզ իրենց ազարակները պիտի տանին ու յատկապէս
պատրաստուած պաշտոններու մէջ տեղաւորեն: Ինչո՞ւ,
որովհետեւ մենք մեզր շինել գիտանք, իսկ դուք, որ
ունայն կեանք մը կանցունէք, բնաւ պիտի չի կրնաք
մէկի մը յարգանքը վայելել՝ քանի որ մեզր չէք շիներ:

* * *

Այս պզտիկ պատմութիւնը խորին փիլիսոփայու-
թեան մը խտացումը չէ՞:

Չի կայ ընկերականութեան մէջ առելի անպէտ մէ-

կը՛ քան այն որ գործ մը ընելու հետամուտ չէ:
Ազգային տեսակետէ նայելով չէզոք անուանելու է այն մարդը միայն որ՛ ճամբարտակ ճանճին նման՝ իր անարգ փորին մէջ միայն կը փնտռէ ազգ, հայրենիք, ազատութիւն և ուրիշ ամեն բան:

Չէզոք կամ ոչ մէկ հանրային գործի հետամտող անձ մը՛ չարագործէ մը աւելի վնասակար ու գէշ է:

Չէզոքը — բառին իրական նշանակութեամբ չէզոք մարդը՛ թէ՛ ազգային շրջանակի և թէ՛ ընկերականութեան ընդարձակ սահմանին մէջ՛ վար է դատարկապորտ ճանճէն որ գտնէ առաջապահական տեսակետէ օգուտ մ՛ունի մարդկութեան:

* * *

Մեզը շինել սորվինք՝ մանաւանդ մեր ազգային շրջանակի մէջ . . . :

**** ՈՍԿԵՓՈՐԻԿ ****

** Ամեն տեսակ սերմեր՛ թ. ձ. Համբնտի քով:

** Միաք Մ. Նշիկեան — Թարմ նոյարեղէններ, թէյ, սուրճ, շաքար, ծխախոտ, և այլն:

** Եթէ կուզես հաւերուզ հաւկիթ ամել տալ բռնի կերպով՝ Տքթ. Նշիկեանի հնարած Միտլէնտ Փօլթրի Ֆիտէն գնէ անոնց համար:

** Տքթ. Շահպաղեան որ փրօվիտէնսի մէջ բժշկութեամբ կը պարապէր, քաղաքս եկաւ՝ հոս հաստատուելու համար:

** Տքթ. Եղիայ Անշպեան որ Պօսթընի մօտերը ընդարձակ ազարակ մը ունի, Ֆրէզնօ կը գտնուի այժմ: Տքթորը մտադիր է իր տունը Ֆրէզնօ փոխադրել և հոս հաստատուիլ:

* * Նոյեմբեր 29ի երեկոյին տեղի պիտի ունենայ ամուսնութեան հանդէսը Վասպուր Փ. Ըսթանի (Թաշճեան) ընդ օրիորդ Նոսմի Վ. Աղէքսանդրեանի՝ այս վերջնայ հօր բնակարանին մէջ՝ Չըբշ ավընիւի վրայ:

* * Անցեալ օր Մարտուանէն քաղաքս հասան Տիգրան Առաքելեան իր ընտանիքով ու զերդաստանով միասին: Այս նորեկներն որ տասն անձերէ կը բաղկանան, պիտի հաստատուին Ֆրէզնօյի մէջ:

Չեք Ապահովագրութեան համար գիտեցէք առ

Պ. Յ. Շեփհրտ և շ Հնկ.

1123 ձէՅ Ըթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կստանան:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիւսթիլովի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Զուրերուն: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

ՀԱԻԿԻԹՐ ՀԱԻԷՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ

— օ —

Տքթ. Բիւզանդ Նշիկեան հաւի համար կուտ մը հընարած ու ի վաճառ հանած է ծամանակէ մը ի վեր: Այս նոր կուտը, որ ոչ միայն հաւերը կը գիրցնէ՝ այլ և հաւկիթ ամել կուտայ անոնց, կը գործածուի այժմ թէ Միտլէնտ Նաշանգներուն ամեն կողմերը, և թէ Քաւնասայի և Անգղիայ մէջ, ուր մեծ ընդունելութիւն գրտած է: Մանրակրկիտ քննութեամբ հաստատուած է թէ մէկ սէնթի այս նորահնար կուտով՝ չորս սէնթ աւելի արդիւնք կարելի է ձեռք բերել՝ մանաւանդ այս եղանակին երբ երկուստանեակ մը հաւկիթը գիւրին է ծախել 25 սէնթի: Կարծէ փորձել այս կուտէն, որ կը ծախուի քաղաքս մէջ՝ Քըթնըր և Կրաֆթ վաճառատներու մէջ. անոր անունն է Միտլէնտ Փօլթրի Ֆիտէն: Գիտնալու է թէ հասարակ ցորենի գնէն շատ տարբերութիւն չունի այս հատիկին գինը: Շատեր փորձած ու զոհ մնացած են անկէ ամէն կերպով: Շատ վկայութիւններ տրուած են այս մասին: Այս վկայութեանց մէկ բողոքագրութիւնը պիտի հրատարակուի քիչ ասանէն առանձին հատորով: Գնելէ առաջ յիշելու է թէ այս հատիկներուն տարբեր տեսակները կան: Գնած ժամանակ ըսելու է թէ ձեր ուզածը հաւ գիրցնելու պիտի ծառայէ՝ թէ հաւկիթ ամել տալու համար: Անունը չը մտնար: *

ՀԱՅԿԱՅԱՆ ԵՒ ՍՄԵՐԻԿԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Այ փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Չրաքեան — — — Ճաշարանատէր Յարգանօք կը ծառայանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ ձէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ ըրած է: Կերակուրներու գնին վրայ թէ և յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր տալ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի ահնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու: Փորձեցէք մի անգամ:

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք: Գնելու հետ ընթրութեան իրաւունք: Պատի թուղթեր կը փակցունենք» ու կը ներկենք:

Բարօսիւ և Տիք, 1153-1155 Այ փողոց, Էվընըրի կիցը:

ՉԵՐ ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ս. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷԶՆՕ ԳԱԼ.

ՍԱՆԹԱ ՖԻ

**** ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻԾԸ ****

Ճամբորդին համար ամեն հանդիսա և զիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւքէ հաս զալու համար:

Ուղղակի շոգեհաւային և երկաթուղի տաներ Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն դալու համար: Տոմսի գրանցելը կրնան հաս վարուիլ, եթէ տոմսերը չի գործածուին՝ գրամը



և ու կը տրուի: Սան Ֆրանսիսկո երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ՛ բազաքիս գրասենեակը՝ Ի թիւ 1031 Ճէյ փողոց, Ֆրէզնո: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրծկ:

Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի

Երկաթուղեաց Ընկերութիւն

Ֆ Ր Է Չ Ն Օ

ԸՆՏՐՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԵՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, ՏԵՐԵՐ

1154 Ճէյ փողոց, — Ֆրէզնո. — Թէլէֆոն Մէյն 160

ՏԱՆԻՀՈՒ, ԷՄԸՆՍ ԵՒ ԸՆԿ.

ՉՈՒԼԱՅՈՒՆԵՐ, ԵՐԿԱԹ, ՊՈՂՈՊՍ, ՄԵՏԱՂ, Երկաթագործներու և Մեքենագործներու վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ, Վառարան, Թիթեղեղէնք.

ԵՐԿԱՆԵՒԻՆԵՐ ՈՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ելեքարական ապրանքներ ու 'Փլլմինկ'

ԱՅ և Մարիփոզա փողոցներու անկիւնը, Ֆրէզնո.

ՕՔԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՍ

Գաղղիական Հացագործ.

ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ 1318 Քէյ փողոց — — — Ֆրէզնո, Քալ.

Տրք. Յ. Հ. Բարսեղեան

Ֆրէզնո ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆԻ ՊԻԼՏԻՆԿ

Սենեակ 16 17. Թէլէֆոն Պրու 492. Ֆրէզնո Քալ.

Պարփոք Ըսրէյարրս,

Էլ և Ֆրէզնո փողոցներ, Պարսիղին զխնայը

Թէլէֆոն, մէյն 174 — — — — Ֆրէզնո

Վարձու կառքեր, ճամբորդներու ձիերուն հոգաատար բռնթիւն: Գներ և ծախել: Բոլոր գիւղերը բաց ենք:

Հրարոչիւր

—0—

Կը մխա՛ս . . . բերնէդ բացեր կը ցայտեն,
Առաա կը վագին սև կրակ, վրփուբ.
Վրդոված ես շատ. քու աքրած սրտէն
Բացեղէն ժայտեր կը ցայտեն բոց, հուբ:

Քո սարսափելի տեսքը՝ տիւ գիշեր
Մարդիկ հեռուէն զիտեն սարսափով.
Բերնէդ դէպ երկինք ցայտալ կայծակներ
Կը լուսաւորեն լեռ, ձոր, դաշտ ու ծով:

Երբ դու բարկանաս՝ ոչ մարդ կամ թռչուն
Յանդգնին մօտ գալ, քիչ միայն մօտ քեզ.
Մահկանացուք՝ մարդ, գազան, անասուն
Հեղուկ կրակիդ ներքև կը ծածկես:

Թող չես սար մէկը գայ քեզ հարցնել
Թէ այս ցասումդ, բոցերդ են ինչու.
Քեզ մօտեցողին կ'սպառնաս պատժել,
Կըտօպես գառնալ շնչասառ ի չու:

Արդեօք քու սիրտդ ալ կրակին մտրմալ
Կայս մ'իր նայուածքով մտանեց անտեղի,
Որ թէև երբեմն կը թուի խաղաղ,
Բայց մխաս նորէն, գոռաս կատաղի:

Թող որ ես մօտ գամ ահաւոր բերնիդ,
Բարեկամ ըլլանք, բաղդակից հրաբուլդս.
Նայիմ բերնէդ վար՝ տեսնեմ թէ սրտիդ
Ինչ վէրք կայ հոն խոր, ինչ սա բոց և մուխ:

Իմ սիրտս ալ կրակ առած կը վառի,
Բերնէս կը ժայթքեն կրակներ ու բոց.
Ես ալ չեմ ուզեր որ մարդիկ ինձի
Մօտ գան՝ վրդովել հոգիս աղեկած:

Բայց իմ կրակէս ոչ ոք վախ ունի.
Իմ ցուերս ինձի ամօթ կը կարծեն.
Կը խնդան մարդիկ, կ'ըսեն սիրտ չունի
Երբ ես կը մխամ, կ'այրիմ այս կայծէն:

Իմ կրակս միայն զիս կայրէ անշէջ,
Ուրիշին անկէ չի կայ բնաւ վախ.
Ես կայրիմ անով, նա կայրի իմ մէջ,
Մ'սիր կընէ զիս անուզան կամ վաղ:

Ահաւի հրաբուլդս, թող որ քովդ գամ.
Տեսնենք որուն բոց սաստիկ է անվերջ.
Կամ ես այրեմ քեզ իմ հրով, և կամ
Մ'սիր ընես զիս բոցիդ մէջ անշէջ:

Հ. Է.

GEORGE BROS.

ՀԱՂՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ, ՏԵՍԱԿ
ՃԵՐՄՍԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՅ Փողոց, — Ֆիսք Պարք — Ֆրէզնո.
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն սպորանք
իրենց տեսակներուն մէջ յաւազոյններն են, բայց շատ
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատաբար ու-
րիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փախաքինք որ անդամ մը փորձէք և վատաշա-
ցնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է
սասնալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ:

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Երեսասարդ տղան աղջիկ մը կը սրիէ — Այդ իրեն
գիտնալիք գործն է: Գեռատի աղջիկը երիտասարդ մը
կը սրիէ — Այդ ալ անոր գիտնալիք բանն է: Ասոնք
որ մը կամուանանան ու պէտքը կըզգան

ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԻԻ

ԱՅԴ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

Sorahy Panyhianri Lnik.

ՆՊԱՐԵՂԷՆ, ԵՐԿԱԹԵՂԷՆ, ԽՈՏ, ԳՍՐԻ ԵՒՆ.

Ֆրէզնո և ԱՅ Փողոցներու անկիւնը

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

— 0 —

Դախարան — Գիտութիւն և գաղանիք — Հիւանդանոցի
մասին — Հիւանդութեանց ծագումը — Չանոնք արդի-
ւելու եղանակները — Գարմաններ:

— 0 —

Աշխարհի ստեղծմանէ ի վեր հիւանդութիւնք մեզի
հետ կարծես ապրած են, և երբեմն մեր տղիտութեամբ
ստակալի կոտորածներ տուած եմք այս անհազ ճիւա-
զին: Բայց ամէն օր մեզ նոր յոյսեր և նոր ու զօ-
րաւոր միջոցներ տրուած են՝ մարդկային սերունդը այս
անգուսպ գազանին մաղիշներէն փրկելու: Հատորներ
կրնայ լեցուիլ միայն հիւանդութեանց ծագման պատ-
ճառներն թուելով և խօսելով անոնց նկատմամբ,
բայց հոս միայն գլխաւորները և կարևորներն յիշելով
պիտի աշխատիմ գոհացունել ընթերցողին հետաքրք-
րութիւնը:

Հիւանդութեանց շատերը գորանակալ կսպասեն
եղանակներու փոփոխութեանց: Կան մարդիկ որ ան-
փոյթ կը գանուին իրենց զգեստն անմիջապէս յար-
մարցնելու՝ կոյտակին, կամ երբ յարգաւատ անձրևի
մը տակ թրջի՝ անհոգ կը գտնուին անմիջապէս փոխ-
ուելու: Կան մեզմէ անոնք ալ որ միւսնայն տարազով
կողջունեն թէ՛ արեգակն ծագումն և թէ՛ լուսնի
երևումն, և ի՞նչ կըլլայ այս անտարբերութեանց արդ-
իւնքն. — նախ կրնայ ըլլալ քիչ մը տաքութիւն կրկորդի
մէջ, նեղութիւն, գլխի ցաւ, աղեաց պնդութիւն, ա-
խորժակի պակասութիւն, ծարաւ, ևն: Եթէ հիւանդն,

ինչ որ յաճախ կը պատահի, կանորութիւն չը տայ բնու-
թեան այն առաջին բողոքին՝ զլուս ցաւը կը սաստ-
կանայ, մարմնի տաքութիւնը սաստիկ ջերմի կը փոխուի,
սրտի զարկը կը բազմապատակի, հիւանդը կը գտնուի իր
քունին մէջ, բերանը կը պսպակի ծարաւէն և երբ՝
բան մը չէ կանցնի ըսելով թողունք, այդ պարագային
նա կրնայ մահացու հիւանդութիւններէ մէկէն բռնուիլ:
Եւ ի՞նչ պատճառաւ. — սրահետե երբ մարդուս կազմն
տկարացած է որ և է պատճառաւ՝ փոքրիկ միջբրայներն,
որ կապրին ընդհանրապէս մեր բերնի, կրկորդի և
և աղիքներուն մէջ, մարմնոյ այս անտոյժը ջերմութեան
արթնցած՝ գործօն վիճակ մը կունենան. կսկսին բազ-
մապատկուելի և թոյն մը (թոկսին) արտադրել՝ ի-
րենց տեսակին յատուկ, որ մեր արեան մէջ մուտ
գտնելով՝ ամբողջ կազմուածքին կը տարածուի և կը
վարակէ զայն. մալմիւնն իր ոյժ և կորով գործարա-
նաց անկանոն վիճակէն՝ աստիճան մը կորուսած, շատ
անգամներ անկարող կըլլայ այս նոր թշնամոյն գլխազ-
րիււ, և վտանգաւոր հիւանդութիւններէ միայն մէջ
կիցնայ, ինչպէս են՝ թիֆօ, թոքախտ, թոքատապ,
ուղեղի անեղ, ջերմ երիկամանց կամ աղեաց բորբո-
քում:

Բացի մի քանի հիւանդութիւններէ որոց պատճառն
և աճումը դեռ գիտութիւնը անկարող եղած է զըտ-
նել կամ բուժել, բոլոր հիւանդութիւնք քիչ կամ շատ
յարարբերութիւն ունին միջբրայի վարդապետութեան
հետ: Մեր գիտցած և ճանչցած հիւանդութիւններէ
վտանգաւորներն ընդհանրապէս իրենց ծագումը կը
պարտին պարզ աչօք անտեսանելի փոքր կենդանի մը
կամ լուս ևս միջբրայի մը որ իր մասնաւոր հիւանդու-
թիւնը կարտադրէ:

Այս ար սրաններէն սոնք ընդհանրապէս օգին մէջն
են որք մեր թոքերն հանդիստ իջևան կըգտնեն. ուրիշ-
ներ ուսելեաց և առարկաներու, մեր ձեռաց և այլնի
վրայ հանգչած են որք մեր ստամոքսին ու աղեաց մէջ
պատասպարան կը գտնեն. ուրիշներ ջուրի մէջ կապ-
րին զորոնք կու տալու վտանգին մէջ եմք յարստամ.
Հատոր ալ հողին մէջ՝ բոյսերու և պտուղներու միջոցաւ
կարչաւեն զէպի մեր գործարանները. կարգ մ'ալ կան
որ թաշող միջատ երն միջնորդ կը կանչեն, ինչպէս
մտիզն, լուս, ճանճն և այլն ու մորթին մէջէն ուղղակի
արեան կարմիր գնտակներն կը հարուածեն: Չիբ'ի
միջբրայներն այս դասակարգին կը վերաբերին:

Արդ՝ գիտնալով հանդերձ այս աներևոյթ թշնա-
միին մշտնջենաւոր գոյութիւնը՝ մեր ուսելեաց, ըմ-
պելեաց, հագուստի և մորթի վրայ՝ տակաւին սրչափ
անտարբեր կը գտնուիմք՝ պաշտպանողական և առող-
ջապահական միջոցներ ձեռք առնելու այս հասարակաց
թշնամոյն դէմ: Մաքրութիւնը առաջին տեղը պէտքէ
բռնէ: Գետերու և կասկածելի հորերու ջուրերէն ըզ-
գոյշ ըլլալու է խմելէ. տարափոխիկ հիւանդութեանց
ատեն՝ ամեն ուսելիք և խմելիք՝ ըլլայ ջուր, բանջարե-
ղէն, պուղ և այլն, կրակի միջտութեանը ենթարկելէ
վերջ գործածելու է. և կերակուրէ առաջ՝ ձեռքերնիս
եռացնալ ջուրով և օճառով մաքրելէ վերջ սեղանին
մասնակցելու է: Աս պարզ միջոցներ եթէ գործածուին՝

չատ անգամ բաւ են ժանտախտի, գոլորայի, թիֆոյի, են. Հիւանդութեանց առջին առնուել: Չը մոռնամ յիշել թէ արտաքին մաքրութեան հետ ներքին մաքրութիւնը չը մտահանենք: Ղէթ երկու շաբաթն անգամ մը մեղմ լուծողական մը սովորութիւն ընենք ունենալ, և ամեն անգամ որ գլխու ծանրութիւն, ախորժակի պակասութիւն կամ ջերմ ունենալք՝ ստաջին պարտականութիւննիս ըլլայ, երբ անկարելի է բժշկի մը օգնութիւնը խնդրել, մաքրողական մը առնուել:

Կան Հիւանդութիւններ որ մեր ապրելու եղանակին և ընկերական կեանքի հետ յարաբերութիւն ունին: Արագ ու տաք կերակուր ուտել, և նոյն ժամանակ պաղ կամ շատ ջուր խմելն անմարտողութիւն և ստամոքսի և աղետաց հիւանդութիւններու կառաջնորդէ: Շատ համեմեներու գործածութիւն և կերակրոյ շատ եփուիլն զանոնք վնասակար կընէ: Գարեջուրի շատ և յաճախ գործածութիւն, այնպէս ալ ուրիշ ոգելիցներու կիրառութիւն երկամանց և լեարդի կործանման — չըսեմ սրտի և ծննդական գործարանաց քանդման — պատճառ կըլլան: Ընկերական կեանքն՝ իր գոնազան պահանջներով և պատասխանատուութիւններով երբեմն այնչտի կսպառէ մեր ոյժը որ չկային Հիւանդութեանց զոհ կերթանք: Ծխախոտն ալ իր հաճելի հոտին ու սպիտակ մուխին հետ մեղ կը բերէ աչաց կարճատեսութիւն, սրտի տկարութիւն, թոքերու շնչարգելութիւն և սիրոյ նուազում: Մարդուս տարիքն ոչ նուազ գործ ունի Հիւանդութեանց տեսակին հետ. ինչպէս, ոսկորի թուլութիւն, կարմրախա, ծաղիկու կոկորդի Հիւանդութիւնը մեր մանուկ հասակին մէջ խրամներ կը բանան: Ժառանգականութիւնը ի մի կազմ թողլով՝ ծննդական գործարանաց հիւանդութիւնք և գաղիական ախտն արբուքի հասած դատակարգին մէջ է որ կը բազմապատուի. մինչդեռ ծերերն ալ՝ կարծես իրենց բոլոր զգայարանաց տկարութեան հետ միասին՝ ենթակայ են սրեան երակներու քարայման, քաղցկեղի, երիկամանց հիւանդութեան, անդամալուծութեան, և այլն: Այս կարգի Հիւանդութեանց զոհ եղող մը ո՛չ խրատով ո՛չ ալ այդ նիւթերու վրայ կարգալով կարելի է բուժուիլ, այլ բժշկի մը անմիջական խնամոց յանձնելու է ինքզինքը:

Դեռ կան Հիւանդութիւններ ալ որ մեր արհեստին բերմամբ կը ժառանգենք, ինչպէս՝ ներկարարն իր ներկի թոյներէն կը վարակուի. դերձակն ու կոշկակարն անմաքուր օդ և նստողական կեանք ի մի բերելով՝ թոքախաի կամ ստամոքսի կամ ոսկորի Հիւանդութեանց կը բռնուին. վերջապէս ամեն արհեստաւոր եթէ զգոյշ չըլլայ և չափազանցութեան տանի իր գործը, ուչ կամ կանուխ՝ կամ իր կազմութեան ձևին կամ իր կենսական գործարանաց մէկուն կամ միւսին պիտի վնասէ: Կան կարգ մը Հիւանդութիւններ որ տեղական են՝ ինչպէս ջերմ, փողացաւ, դեղին տենդ, և այլն: Այսպիսի Հիւանդութեանէ մը ազատելու համար տեղերնիս փոխելու ենք անմիջապէս: Շարք մը Հիւանդութիւններ ալ թոյներու մեր մարմնոյն մէջ մուտ գտնելէն առաջ կուգան: Աս թոյներ երբեմն կալային վիճակի մէջ կը ներկայանան. ինչպէս ամխածինը, օդա-

յին կազը կամ վառարաններու ծուխն: Դեռ շատ ժամանակ չընէր որ գաղիացի նշանաւոր վիպասան՝ Զօլա սենեակի վառարանի ծուխով թուեաւորուեցաւ և աշխարհ կորոյս իր յանձին մեծ հեղինակ մը: Երբեմն կենդանաց կծոցներու մէջ կամ ատամանց միջոցաւ թոյնը մեղ կը հասնի: Ամեն՝ պատմութեան աշակերտ կը յիշէ կղէոպատրա Եգիպտացի թագուհւոյն վիպասանական մահն՝ երբ իժի մը խայթուածովն նախանձելի փառաց վերջ տուաւ: Երբեմն սոյն թոյներ հեղուկ վիճակի մէջ ծանօթ են. ինչպէս՝ սնդիկը, և մետաղի դասին պատկանող շատ մը թոյներ, բորակածին թթուն, և այլն: Կան թոյներ ալ որ փաշիի ձեռով մեղ կը ներկայանան, ասոնք կրնայ ըլլալ որ հանքային աշխարհին կամ բուսական աշխարհին վերաբերին: Ափիոնն ամենուս ծանօթ է իր թէ՛ վնասակար և թէ՛ օչտակար կիրառութիւններով:

Երբոր մարդիկ այս կարգի թոյներու որս կ'ընեն՝ ամենալաւ միջոցն է փոխեցուցիչ մը առնուլ և անմիջապէս բժշկի մը զիմել: Դեռ կան սեռային, ցեղային և մորթի հիւանդութիւնք որք ոչ սակաւ կարեւոր են, սակայն տեղի անձկութեան պատճառաւ մասնագիտաց պիտի թողում ճառել անոնց մասին:

Այս առթիւ թող ներուի ինձ ուշադրութեան առարկայ ընել դեռ մեր ամենամեծ Հիւանդութիւններէ մին՝ որ թէ և ո՛չ բժշկի կը կարօտի և ո՛չ ալ դեղի, ո՛չ Աւետարանի և ո՛չ շարլաթանի, բայց ամեն անհատ կարող է զայն բուժել՝ եթէ միայն կամք ունենայ. — Անտարբերութեան և Չեզոքութեան Հիւանդութիւնը ակնարկել կուզեմ: Տարբերութիւն չընենք եղ թէ ինչ կոչում ու դիրք ունիս այս աշխարհի մէջ՝ աշխատէ օգտակար անգամ մը դառնալ անոր. և դա կարելի է յայնժամ միայն՝ երբ անտարբերութեան քօլն պատուելով՝ գործօն հիւլէ մը ըլլաս դէպի ընկերականութիւն, ազգութիւն և մարդկութիւն:

Սոն Ծրանախօ ԵՔԹ. 10ՆԿ
(Ա. քաթրազ) ՎԵՐՋ

Առեւտրական Կոտորած
Ա. ԸՄԹԱՔ
Հանդերձալիաձառ

Թանքակիվինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են:
1027 ձէյ փողոց, — — — Ծրէզնօ, Քալ.

ԳՆԱ ԱՌ
ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.
ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԲԱՆՁԵՐՈՒ,
ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ
1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ ԹԷԼԷՖՈՆ
ՅՐԷՋՆՕ, ԳԱԼ ԷՔՄԷՆԷ — ԹԻԼ 2